ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան «05» հոկտեմբերի 2022թ.

2022 թվականի հոկտեմբերի 05-ին տեղի ունեցավ ՔՏՀԱ տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ նաև՝ ԿԽ) արտահերթ նիստ:

Օրակարգը սահմանված ժամկետում ներկայացվել է Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էր հետևյալ հարցը.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում թեկնածուի առաջադրում ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու նպատակով:

Նիստին մասնակցել են՝

Ա. Փամբուխչյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս. Թովմասյան	- ՀՀ կադաստրի կոմիտեի նախագահ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ
Տ. Բաբայան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Դ. Սողոմոնյան	- «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Ս. Հովսեփյան	- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու

Նիստին հրավիրված էին նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ Նունե Պետրոսյանը ՀՀ վարչապետի աշխատակազմի ՏՄԱՀ Գրասենյակի ղեկավարի պարականությունները կատարող Ա. Դանիելյանը, նույն գրասենյակի ղեկավարի տեղակալ Տ. Հակոբյանը, Տեսչական մարմնի որակի վարչության պետ Գ. Գիլոյանը:

Նիստը նախագահողը ողջունեց նիստի մասնակիցներին և ներկայացրեց Օրակարգը: Օրակարգը հաստատվեց միաձայն:

Խորհրդի նախագահը առաջարկեց թեկնածուին ներկայացնել իրեն և իր աշխատանքային գործունեությունը: Տեսչական մարմնի ղեկավարի թեկնածու Գ. Խաչատրյանը հակիրճ ներկայացրեց իրեն, որից հետո քննարկումը տեղափոխվեց հարց ու պատասխանի ձևաչափ:

Թեկնածուին հավանություն տալու և ՀՀ վարչապետին ներկայացնելու վերաբերյալ հարցը դրվեց քվեարկության: ԿԽ բոլոր ներկա անդամները քվեարկեցին «կողմ»

Կառավարման խորհրդի նախագահ՝

Recoverable Signature

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246 **Ա. Փամբուխչյան**

Կառավարման խորհրդի քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող՝ **Ն. Մելիքսեթյան**